# Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

## ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ - ԲԵՄԱԿԱՆՔ

● Ուր. 22 Յուլիս. — Վաղուան Նախատօնակը պաշտուեցաւ Մայր Տաճարին կից՝ Ս. Էջմիածին մատրան մէջ։ Հանդիսապետն էր Գերշ. Տ. Հայրիկ Եպս. Ասլանեան։

● Շբ. 23 Յուլիս. — Յիշատակ Տապանակին։ Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Էջմիածին, Պատարագիչ Հոգշ. Տ. Գեղամ Աբղ. Զաքարեան։

— Այլակերպութեան մեծահանդէս Նախատօնակը պաշտուեցաւ ի Ս. Յակոբ։ Հանդիսապետն էր Գերշ. Տ. Հայկազուն Եպս. Աբրահամեան։

— Իրիկնադէմին, Գերշ. Սրբազանը Նախագահեց նաև Մայր Տաճարին մէջ պաշտուած «Ծնկեսցէի և Հսկման արարողութիւններուն։

● Կիր. 24 Յուլիս. — ՎԱՐԴԱՎԱՌ Տօն Այլակերպութեան Տեառն։ Հանդիսաւոր Ս. Պատարագը՝ Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ մատոյց և քարոզեց Գերշ. Տ. Հայկազուն Եպս. Աբրահամեան, բնաբան ունենալով «Բարւոք է մեզ աստ լինել», հաղորդելով նաև Ամենայն Հայոց Վեհ. Հայրապետի ողջոյններն ու Մայր Աթոռ Ս. Էջմիածնի օրհնութիւնները Սաղիմահայ գաղութին։

— Կէսօրէ վերջ, Գերշ. Սրբազանը նախագահեց նաև Մայր Տաճարին մէջ կատարուած «Անդաստանի»ին։

● Բշ. 25 Յուլիս. — Յիշատակ մեռելոց։ Մայր Տաճարի Ս. Գլխադրի մատրան մէջ պատարագեց Հոգշ. Տ. Օհան Աբղ. Գապագեան։ Ապա, Գերշ. Տ. Հայրիկ Եպս.ի նախագահութեամբ, կատարուեցան հոգեհանգստեան կարգեր՝

ա Մայր Տաճարին մէջ,

բ) Գուրիթը՝ Տ. Կիւրեղ Պատրք.ի շիրմին վրայ,

գ) Հին կրտսերան առժմ. գերեզմանատան մէջ,

դ Զամ-Թաղի » » ։

● Ուր. 29 Յուլիս. — Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Գերշ. Տ. Հայկազուն Եպս.։

● Շբ. 30 Յուլիս. — Ս. Թադէոսի առաքելոյն եւ Սանդխտոյ կուսին։ Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Գլխադրի մատրան մէջ, ժամարարն էր Հոգշ. Տ. Մաշտոց Վրդ. Բարիլուեան։

● Կիր. 31 Յուլիս. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ, ժամարարն էր Հոգշ. Տ. Գէորգ Վրդ. Նազարեան, քարոզից Գերշ. Տ. Նորայր Եպս. Պօղարեան, բնաբան ունենալով «Ի նեղութեան իմում ես առ Տէր կարդացի ...», յայտնելով թէ մարդ միշտ վտանգի պահուն իբրև վերջին ապաւէն կը դիմէ Աստուծոյ։ Անդրադառնալով մեր համայնքային կեանքին, Սրբազանը յայտնեց թէ հոն պարզուող ցաւալի ու անբաղձալի երևոյթները վերջ կը գտնեն այն ատեն միայն, երբ մեզմէ իւրաքանչիւրը ուրիշին թերութիւնները սրբագրելու ելլելէ առաջ ճիգ ընէ ինքզինքը սրբագրելու։

## ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

● Բշ. 25 Յուլիս. — Հոգշ. Տ. Գեղամ Աբղ. Զաքարեան նշանակուած ըլլալով առժմ. Հոգևոր Հովիւ Ամմանի և շրջակայից, մեկնեցաւ իր պաշտօնատեղին։ Իսկ նախկին Հովիւ Հոգշ. Տ. Արիս Աբղ. Շիրվանեան վերադարձաւ Ս. Աթոռ։

— Պէյթ Հանինայի և Արրուպի ուսուցչանոցի վկայականներու բաշխման հանդէսին Պատրիարքարանիս կողմէ ներկայ եղան Գերշ. Տ. Հայրիկ Եպս. Ասլանեան և Հոգշ. Տ. Օհան Աբղ. Գապագեան։

● Գշ. 26 Յուլիս. — Նորին Վեհ. Թագաւորին բարձր հովանաւորութեան տակ, Քաղաքապետարանի դաշտին վրայ սարքուած զինուորական մարզահանդէսին Պատրիարքարանիս կողմէ ներկայ եղան Գերշ. Տ. Հայկազուն Եպս. Աբրահամեան, Հոգշ. Տ. Յակոբ Վրդ. Վարդանեան և Հոգշ. Տ. Գէորգ Վրդ. Նազարեան։

● Դշ. 27 Յուլիս. — Գերշ. Տ. Հայրիկ Եպս. Պատրիարքարանի գործերով մեկնեցաւ Իսրայէլ և վերադարձաւ նոյն օրը։

● Կիր. 31 Յուլիս. — Փարիզէն Ս. Աթոռ ժամանեց Հարտարապետ Տիար Եդուարդ Իւթիւճեան, զբաղելու համար Ս. Յարութեան Տաճարի նորոգութեան խնդիրներով։

digitised by A.R.A.R.@